

ԱՅՍՊԷՍ Է ՄԱՐԴԸ

I.

Սիրելի մայրիկ

Դու գրում ես, որ սաստիկ ծանր տրամադրութեան տակ ես. օրերդ անցնում են շատ տխուր, թախիծը պատել է հոգուդ. այդ դրութեան մէջ եմ այժմ, մայրիկ, և ես։ Ո՛հ, ի՞նչ ծանր վիշտ է, որ կրծում-մաշում է իմ հոգին, որ պատել է գլուխս և բոլոր չի տալիս ազատ մտածելու. ի՞նչ անեմ, ի՞նչպէս վանեմ նրան, այդ ես էլ չգիտեմ. ի՞նչ գործի էլ ձեռնարկում եմ, իսկոյն ընկնում է ձեռքիցս և մնում կիսատ, իսկոյն մատնւում եմ ինքնամոռացութեան և մի աներևոյթ ծանր բեռ նստում է շնքիս։ Դրսումս էլ, մայրիկ, այնպիսի եղանակ է, որ աւելի խորասուզում է իմ մտքերը վշտերի աշխարհում. մեղմիկ անձրևը ամբողջ օրը մաղում է անդադար և նրա կաթիլները դանդաղ բաղխում են պատուհանիս ապակիները. այս բոլորիս, գուցէ յիշում ես, մայրիկ, ակամայ միտս են ընկնում բանաստեղծի խօսքերը. «Թափւում է, թափւում դանդաղութեամբ անվերջ անձրևը, ծանր, որպէս անմաքուր խղճի ձայն, երկնք, որպէս աքսոր, ուժեղ, որպէս ճակատագիր և համբերող, որպէս պառաւ ստրկուհի» Եւ իրաւ, այս անձրևը ինձ համար իսկապէս «անմաքուր խղճի ձայն» է, նամանաւանդ այժմ, երբ ես մենակ, բոլորովին մենակ եմ տանք. սենեակումս այնպիսի լուծիւն է, որ ճանճի թոփջը մինչևիսկ լսելի է։ Վառարանումս ոստոստելով ճռճում է արուսիկը և սենեկիս կատարեալ լուծիւնը խանգարող այդ միակ միակերպ ու միապաղաղ երգը, կարծես, ասում է ինձ, որ այժմ, այս բոլորիս հէնց, երբ ես հանգիստ նստած այս տաք սենեկում գրում եմ քեզ այս իմ նամակը, կան հազարաւոր անբաղտ, ճակատագրից հալածուած արարածներ, որոնք կարօտ են ոչ միայն այսպիսի տաք սենեկի, կուշտ փոր հացի, անձնուէր ընկերի, այլ գուրկ են

մինչև իսկ մի սառն, խոնաւ և կեղտոտ նկուղից, որտեղ կարողանային պատսպարուել այս լալկան եղանակին: Եւ անա իմ աչքի առաջ ներկայանում են, կարծես, ես տեսնում եմ այդ գունատ, նուաղած, տանջանքից հիւժուած և տարածամ թորշոմած դէմքերը. անա նոքա, անա այդ բաղդաղուրկ խեղճերը, անա թափառում են նոքա ոտնալպիւրծ, ցեխոտ փողոցներում և ողորմութեան ձեռք կարկառում անցորդներին. բայց որքան յաճախ նոքա այդ քամբաղտ արարողութեան ժամանակ ևս ստանում են մերժումներ. գտնւում են մինչև իսկ այնպիսիները, որոնք հեռուից տեսնելով նոցա և իմանալով նոցա արհեստը, դեռ հեռուից կոպիտ հայհոյանքներով յետ են քշում: Այո, բաղտաւոր է, սիրելի մայրիկ, բաղտաւոր է նա, ով այս խոնաւ եղանակին ունի իր համար մի տաք ապաստան, մի տաք անկիւն:

Բայց իմ աչքի առաջ կանգնած են էլի դալկահար, տաւածամ թորշոմած դէմքերով, կեանքի դառնութեան, քաղցի ու վշտի հետ վաղ մտերմացած երեխաներ. երեխաներ, որոնց դէմքի վրայ փոքրութիւնից արդէն նկատւում է լրջմտութիւն, տրտմութիւն. երեխաներ, որոնք մարդկանց չարաննդ աչքից փախչելու համար միշտ պահուում են խոճ-խոճ անկիւններում և այնտեղ բռնադատում իրանց քամբաղտ վիճակը:

Եւ ինձ թւում է այժմ, որիւրի մայրիկ, ու իմ լուսամուտի ապակիները բաղխողները անձրևի այդ սառն ու մանր կաթիլները չեն, այլ այս մարդկութիւնից մոռացուած, աչքաթող եղած, անբախտ, անապաստան վաղածամ ծերունիները, որոնց բաղտը թողել է ճակատագրի քմահաճոյքին: Եւ ի՞նչեր, ի՞նչեր չէի անի ես այս բոլէիս, ի՞նչեր չէի զոհի, միայն որ կարողանայի վերջ տալ այդ խեղճերի թշուառութեան, որ այլևս չտեսնէի նոցա ես այդ այլանդակ դրութեամբ. բայց ի՞նչ. ակամայ միտքս են ընկնում էլի այն խօսքերը, թէ Վեդ տրուած են միմիայն բարի ձգտումներ, իսկ նոցա հասնելու համար—ոչինչ:

Եւ իսկապէս ոչինչ, ոչինչ չենք կարող անել, որ թեթևացնենք մի քիչ նոցա տանջանքը. ախր ես բարի եմ ուզում, մայրիկ, ի՞նչու չեմ կարող անել. ի՞նչու աշխարհս այնպէս է ստեղծուած, որ բարի ձգտումներն ևս մարդու մէջ է խեղդում, ի՞նչու մարդկութեան համար ես մի բարիք չպիտի կարողանամ անել...

Այո, տխուր է, մայրիկ, տխուր է կեանքը. ցաւալի է

ինձ համար, սաստիկ ցաւալի, որ մենք կատարեալապէս անգօր ենք, որ մեր արածը ոչինչ է, մի աննկատելի ջրի կաթիլ միայն ահագին ովկիանում... Ախ, Տէր իմ, որքան փոքր է մարդը...

Օհ, այս ի՞նչ էր, ի՞նչ ժանտ ձայն էր զանգակի, ի՞նչպէս վախեցայ ես. երևի մերոնք են, եկան թատրոնից. ափսոս, նոքա իրանց գալուստով խանգարեցին իմ մտադրադմունքը. բայց պէտք է զնալ դռները բանալու. Այո, իսկապէս նոքա են, Հեռու և ազատ աշխարհի հոգսերից նոքա աղմուկով ներս խուժեցին դռներից. անձրևի պսպղուն կաթիլները փայլում էին նոցա մագերի և շորերի վրայ: Ուրախ, ծիծաղկոտ դէմքերով, հակառակ արտասուող եղանակին և շրջակայ մթնոլորտին, նոքա իսկոյն նստան սեղան և սկսեցին թէյ խմել. մի՛ քանի րոպէի ընթացքում սեղանի վերայ եղած բոլոր ուտելիքները արդէն սպառուած էին: Օ, որքան սիրելի են ինձ համար այդ դէմքերը, թանկագին դէմքեր, ի՞նչպէս սիրում եմ ես ձեզ...

Նոցա վերայ նայելով, կարծես, թեթևանում է սակաւ առ սակաւ իմ վիշտը. մի ջերմութիւն է ներմուծում ներսս և մի խաղաղ ու զուարթ տրամադրութիւն տիրանում իմ ողջ էութեան... — Օհ, այս ի՞նչ է, գոչում եմ յանկարծ... Ա՛խ, այս փոքրիկ Աստղիկն է, որ ձեռներով փակելով դէմքս, ուզում է ծիծաղել վերաս:

— Աստղիկ, թող, գոչում եմ, թող խելադութիւնդ: Ես աշխատում եմ, որքան կարելի է, խիստ և մտածկոտ կերպարանք տալ դէմքիս, բայց իզո՞ւր... Թ՛ը՛րբա՛խ և մենք երկուսս էլ պտոյտ կազմելով փուռում ենք գետին. ամենքը վազեցին մեզ բարձրացնելու և սկսուեց իրարանցում... Այդ րոպէին մէկը մօտեցաւ դաշնամուրին և սկսեց նուագել մի գեղեցիկ վալս. մենք իսկոյն սկսեցինք վայրենացած պտոյտ գալ դահլիճում. պարերը անդադար փոխարինում էին իրար և մենք պարում էին անվերջ, անկշտում...

— «Ո՛հ, ի՞նչպէս յոգնեցի ես», գոչեց յանկարծ Աստղիկը և թալկացած ընկաւ բազկաթոռի վերայ: Սա մի նշան էր մեր պարը վերջանալուն. ածողը վեր կացաւ դաշնամուրի մօտից, սկսեցինք մեր սովորական խօսակցութիւնը և նստանք այդպէս երկմը, շատ երկմը... Աքաղաղներն արդէն երկրորդ անգամը աւետում էին լուսոյ մօտալուստ գալուստը, բայց մենք էլի նստած էինք, էլի ժամանակ էինք սպանում: Վերջապէս երկար խօսակցութիւններից յետոյ ամենքս էլ քնաթաթախ քաշուեցինք տեղերս...

Բայց, ախ, այն գունատ պատկերները, այն կեանքի
զոհերը կրկին ներկայանում են ինձ, կրկին սարսեցնում...
Խնչ անեմ, լիչպէս աղատուեմ...:

— Հեռու, հեռու ինձանից. թոյլ տուէ՛ք գոնէ մի քանի
ժամ հանգիստ քնել, թողէ՛ք գոնէ մի քանի բոպէ մոռանամ...:
Բայց նոքա կանգնած են անշարժ...:

Ձէ, չէ, մայրիկ, էլ սիրտ չկայ շարունակելու. գրելու
բան դեռ շատ ունիմ, բայց դառն մտքերը յուզում են սիրտս,
սենեակս պտտում է գլխիս, աղի քրտինքը հոսում է ճակտիցս,
բաղտից հալածուածները խեղդելով ինձ, ահա բաղտից բաժին
են պահանջում, լիչ անեմ, միթէ կարող եմ տալ...

Ներքը, մայրիկ ջան, ներքը այսպիսի նամակ դրածիս.
Ներքը, չեմ կարող շարունակել, թող մնայ, թող մնայ հետեւալ
անգամին, հետեւեալ անգամին, մայրիկ:

ՕՐ. ԳԵՂԵՑԻԿ ԽԱՍԲԷԿԵԱՆՑ